

նելու են ու տալու են: Թափոքով, մեթոտով զինքը մօտեցուցի այն անհրաժեշտ «դադարներուն», «ընդհատներուն», որոնք կարիք մըն են մտիկ ընողին չափ ըսողին թերեւս, քանի որ շատ լարուած անոր մտածումին բեռը կը հանգ-չեցնէին գէթ պահի մը համար, անոր ընծայելով պատե-հուծիւն շունչ առնելու (մեր ուղեղն ալ, այսինքն՝ անոր մտածական fonctionnementը ենթակայ է սա բնախօսա-կան իրողութեան), աւելի ուժով դառնալու համար իր ճախրանքներուն: Ձեզի դժուար է մտապատկերել այդ ճպողութիւնը, որ լափած էր իր շրջանին բոլոր ընկերային, ըն-կերաբանական վարդապետութեանց խաւն ու կոթունքը (հասկ՝ որմէ ցորենը չէ արձակուած կամին տակ) ու կը հաւատար իր դերին, առաջին դարու նորընծայ հրեայի մը նման, Մեսիան քարոզելու իր խանդին մէջ սիրայօժար մեռնելու Յեղափոխական փրոփակաւտին հետ, այսինքն՝ ճիշդ ու ճիշդ ժիշիի նման ճաթելու աստիճան ճոճուալէն յետոյ, քրտնաթոր, սպառած՝ անիկա քանի մըրոպէ շունչ կը փնտռէր լուծեանէն, որմէ ետք կ'ըլլար մատչելի «ա-րիւնառութեան», անգիտակցաբար բանալով ծալքերը իր անհատական կեանքին, անշուշտ միշտ ժլատ, բայց միշտ ալ տրամադիր այդ «անձին» դառնալու, քանի որ ամէն յեղափոխականի նման կը հաւատար այդ անձին ար-ժէքին: Միւս կողմէ՝ հզօր է հակադրութիւնը, որ կայ հարազատ յեղափոխականը յօրինող զոյգ անձնաւորու-թեանց խառնուրդ չէնքին մէջ: Աւելորդ է խօսիլ վճռա-կան, արի, արու, հոյակապ երիտասարդէն, որ իր գա-ղափարին համար կը յարձակի մահուան վրայ, իր բոլոր եսերուն դիմաց հանելով իր նուիրումին սխրալի հանդէսը: Մեր հին, մա՛նաւանդ պատմութիւնը բիւրեր կը հաշուէ անոնցմէ: Բայց քիչեր պիտի ընդունին, որ յե-ղափոխականը ըլլալու պարզսիրտ, միամիտ, մանուկէ մը աւելի, բոլոր այն մարզերուն վրայ, որոնք իր «մաս-նագիտութեանէն» կ'իյնան դուրս: Կեանքը աւանդի մը պէս կրելու վարժուած, անոր հետ իր հաշիւը ընդմիշտ յարդարած հոգեբանութեամբ մը՝ անիկա պիտի նայի